

ՀՐԱԴԱԴԱՐԸ ԹՈՒՂԹԻ ՎՐԱՅ ԿԸ ՄՆԱՅ

ԿՈՒՒՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՒՆ ՆԱԵՒ ԴՈՒՄԲԵՐԸ ՀԱՅԿ. ԳԻՒՂԵՐՈՒ ՎՐԱՅ

Սեպտեմբեր 1-ի հրադադարը, ըստ երկուսթիւն կը մնայ թուղթի վրայ, քանի Սեպտեմբեր 1-էն 2 շարունակուած են թէ մարտերը Մարտակերտի եւ սահմանամերձ շրջանները եւ թէ հայկական զիւղերու ոմրակոծութիւնը:

Այսպէս, Սեպտեմբեր 2-ի առաւօտեան հայկական ինքնասարաշտպանութեան ջոկատները կրցած են կասեցնել ադրբեջանական ստորարաժանումներու յարձակումները Արցախի Հադրութի շրջանի Էղիլլու գիւղի վրայ: Ադերիները նահանջած են, գղալի կորուստներ կրելով: 4 բնակիչ վիրաւորուած է սակայն շրջանի Զրակուս գիւղը:

Նախորդ իրիկունն ալ եւ Սեպտեմբեր 2-ի ամբողջ օրն ալ կատաղի կռիւները շարունակուած են Մարտակերտի շրջանը եւ հայ մարտիկները ստիպուած եղած են նահանջել շրջանի Կճողուտ եւ Պօղոսաղումեր գիւղերէն: Կռիւներու լնթացքին ոչընչացուած են Ադրբեջանցիներու երկու հրասայլ եւ մէկ դրահակառք: Ադերիները նաեւ 20 զինուոր կորսնցուցած են առնուազն: Հայկական կողմը երկու մեռեալ կայ եւ 10 վիրաւոր:

Բաքու կրկնելէ ետք թէ Ալմա - Աթալի հրադադարի համաձայնութիւնը չի վերաբերիր Ղարաբաղի, Հայաստանի կը վերագրէ սահմանամերձ շրջաններու հրադադարի իրախտումը եւ իրրբեւ օրինակ կու տայ Զերրայիլի շրջանի ոմրակոծումը, մինչ Զերրայիլ սահմանամերձ չէ Հայաստանի, որմէ բաժնուած է ադրբեջանական Ղուբաթլիի շրջանով:

Ադրբեջանցիք կը շարունակեն կրակել սահմանամերձ շրջանները, ինչպէս՝ Կասպանի շրջանի Դիցմայր գիւղի ուղղութեամբ: Ծանր թնդանօթաձղութիւն ալ կատարուած է Սիսիամի, Գորիսի, Եղեղձաձորի եւ Տաուշի սահմանային շրջաններուն վրայ: Սեպտեմբեր 2-ին, Ղուբաթլիի շրջանէն ալ կրակ բացած են Գորիսի շրջանի Շուռնուխի, նաեւ Հարթաչէնի եւ Խընձորեակի վրայ: Որոշ հանդարտութիւն սկսած է տիրել իրիկուան ժամը 5-ի շուրջ: